



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Ս. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՍԵԱՆ ԹԵՄԻ

**WESTERN PRELACY**

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## **ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԲՐԵՍԵՆԹԱ ՀՈՎԻՏԻ ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑՈՅ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԻԹՈՎ**

Բրեսենթա Հովիտի Հայց. Առաք. Ս. Եկեղեցւոյ հիմնադրութեան երրորդ տարեդարձը յատուկ հանդիսութեամբ տօնախմբուեցաւ Եկեղեցւոյս մէջ:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան, Կիրակի, 9 Նոյեմբեր 2008-ին, Ս. Պատարագ մատուցանեց Բրեսենթա Հովիտի Եկեղեցւոյ մէջ:

Պատարագիչ Առաջնորդ Սրբազան Հայրը, Սարկաւազաց եւ Դպրաց Դասի թափօրով, ինչպէս նաեւ «Հրաշափառ» շարականի երգեցողութեամբ մուտք գործեց Եկեղեցիէն ներս, որ լեցուն էր հաւատացեալներու խումներամ բազմութեամբ:

Ս. Հաղորդութեան ընծաները պատրաստելէ եւ թափօր դառնալէ ետք, Առաջնորդ Սրբազանը Ս. Պատարագը շարունակեց մինչեւ քարոզ, երբ տուաւ իր Հոգեւոր պատգամը: Օրուան բնաբանը առած էր Դուկաս Աւետարանի 8-րդ գլուխի 40-56-րդ համարներէն: Առաջնորդ Սրբազանը անդրադարձաւ 12 տարիներէ ի վեր հիւանդութենէ տառապող կնոջ հաստատ եւ անկասկած հաւատքին, որ միայն Տիրոջ քղանցքին հպումով իսկ պիտի առողջանար, եւ այդպէս ալ, իր հաւատքին համաձայն, բուժուեցաւ. նաեւ՝ անդրադարձաւ թէ այս հրաշքը կատարուեցաւ, երբ Յիսուս կ'ուղղուէր Յայրոս անունով ժողովրդապետին բնակարանը, անոր խնդրանքին եւ աղաչանքին ընդամառելով, որովհետեւ աղջիկը մահամերձ էր եւ ապա իմացուցին, որ մեռած էր ան: Յիսուս մեռած աղջիկն ալ ողջնցուց, Յայրոսին հաւատքին զօրութիւնը գնահատելով, որովհետեւ ան անտեսած էր իր դիրքը, պաշտօնը, պատկանելիութիւնը մէկդի դրած, անվախութեամբ, փնտռած էր իր Փրկիչը, բուն իսկ Մեսիային Օծեալ Տէրը, եւ զայն գտնելով, դիմած էր Անոր: Տպաւորիչ մեկնութիւններով, պատկերացումներով եւ հոգեպարար հաղորդականութեամբ այդ նիւթերուն ընդմէջէն Առաջնորդ Սրբազան Հայրը հրաւեր ուղղեց մեր ժողովուրդին, որ նման հաւատքով ապրինք մեր կեանքը միայն ու միայն Տիրոջ դիմելով, ինչպէս որ Նոյնանման հաւատքով երիտասարդ եւ աստուածավախ Նուիրեալներու փաղանգի մը անխոնջ աշխատանքով իրականացաւ գաղութիս մէջ երեք տարիներ առաջ հիմնադրուած սոյն Եկեղեցին:

Սրբազան Հայրը գնահատեց Եկեղեցւոյ հոգեւոր մատակարարը, ինչպէս նաեւ Ազգ. երեսփոխաններու, հոգաբարձութեան, Տիկնանց

Միութեան, Դպրաց եւ Սակաւագաց դասերու, երգչախումբին եւ յարակից մարմիններու անդամներու ժրաջան գործունեութիւնը, մաղթելով որ մօտիկ ապագային իրականութիւն դառնայ սեփական կալուածով եկեղեցի մը ունենալու բոլորին փափաքն ու երազանքը:

Յաւարտ Ս. եւ Անմահ պատարագին, պատարագիչ Սրբազան Հայրը «Ուրախ Լեր»ի երգեցադութեամբ առաջնորդուեցաւ եկեղեցւոյ գաւիթը, ուր նաեւ ներկայ հաւատացեալներ խանդավառ մթնոլորտի մէջ երգեցին «Կիլիկիա»ն: Ապա Առաջնորդ Սրբազան Հօր պահպանիչով եւ օրհնութեամբ իր աւարտին հասաւ օրուան հոգեպարար մթնոլորտը:

Եկեղեցւոյս Տիկնանց Միութեան գեղեցիկ սովորութիւններէն մէկը դարձած սիրոյ ճաշը, դարձեալ մեկտեղեց հաւատացեալները, եկեղեցւոյ կից գտնուող սրահին մէջ, ուր Սրբազան Հօր սեղանի օրհնութենէն ետք ներկաները մասնակից եղան սիրոյ ճաշին, որմէ ետք հոգեւոր ուրախութեամբ լիցքաւորուած հաւատացեալները քաղցր յուշերով մեկնեցան իրենց տուները:

## **CELEBRATION OF THE THIRD ANNIVERSARY OF THE CRESCENTA VALLEY PARISH**

On Sunday, November 9<sup>th</sup>, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, celebrated Divine Liturgy and delivered the sermon at the Armenian Apostolic Church of Crescenta Valley in honor of the third anniversary of the parish. The Prelate was assisted at the altar by parish pastor Rev. Fr. Ardak Demirjian.

With the singing of the “Hrashapar” hymn, the Prelate entered the church to begin the service.

The Prelate’s sermon was on Luke 8:49-56 which tells of the woman who was suffering from a serious illness for 12 years and was only cured when she reached to each the hem of Jesus’ garment and the raising from the dead of Jairus’ daughter by Jesus. The Prelate urged the parishioners to live with the same faith exhibited by Jairus and the sick woman and to place our trust in God and God alone.

The Prelate commended the Pastor, Delegates, Board of Trustees, Ladies Auxiliary, altar servers, choir members, and all the volunteers for their hard work and efforts over the past three years and the progress they have achieved thus far, expressing hope for the parish to have its own church in the near future.

Following the service, the Prelate and congregation headed to the adjacent hall for a reception that had been organized by the Ladies Auxiliary.